

ԽՈՍՔ, ԱՎԱՂ ՀԻՇԱՏԱԿԻ

Այս տարվա օրացույցի հունվարի 24-ի թերթիկի վրա կարդացի. «50 տարի առաջ ծնվեց Պարույր Սեւակը, սովետահայ բանաստեղծ»: Ու հաջորդ տողին չանցնելով, մտածեցի, տեսնես հասցրե՞լ են նշել մահվան մասին: Եւ, ազնիվ խոսք, զարմացա, նկատելով, որ գրված է, մեռ. 1971 թ.»:

Ինչպե՞ս թե: Արդեն երեք տարի է դառնում, ինչ Պարույրը չկա՞:

Ինչպե՞ս չկա, երբ ամեն օր մեզ հետ է: Ինչպե՞ս չկա, երբ ամենուրեք արտասանում են նրան, երբ ամենուրեք գրում նրա մասին, երբ ամենուրեք հիշում են նրան:

Ինչպե՞ս չկա Պարույր Սեւակը, երբ ամբողջ Միությունը եւ սփյուռքը նրա ծննդյան հիսնամյակն է նշում:

Այսինքն՝ լինե՞ր էլ, չէր մասնակցի այդ հանդիսություններին: Չէր սիրում հոբելյաններ ու նիստեր: Հիմա փախած կլինե՞ր որեւէ տեղ՝ Չանախչիի իր տունը կամ Դիլիջան ու նոր խնդիրներ կմտածե՞ր 21-րդ դարի հաշվիչ մեքենաների համար:

Չէր սիրում հոբելյաններ, չէր սիրում մեծ դահլիճներ, չէր սիրում բազմամարդ հանդիպումներ: Շատ էր խուսափում: Բայց որովհետեւ ստիպում էին, խնդրում, պահանջում էին, բայց որովհետեւ փափուկ սիրտ ուներ, մերժել չէր կարողանում, գնում էր՝ գոռգոռալով, անիծելով իրեն, իր բնավորությունը, իր գործը եւ ամեն հանդիպումից հետո հանդիսավոր երդվում, որ դա վերջինն էր: Վերջ... մինչեւ նոր հանդիպում:

Ավելի հրապուրիչ, ավելի գրավիչ մարդ չկար... Որտեղ էլ լինե՞ր, տաքանում էր շրջապատը: Նրա կողքին հեշտ էր շնչելը, նրա կողքին մարդ մարդ էր գգում իրեն: Ինչ տուն էլ մտներ՝ նվաճում էր: Հինգ բոպե չանցած՝ պառավները «որդի ջան» էին ասում նրան, երեխաները նստում էին ծնկին ու համբուրում էին, տանտիրուհիները հանում էին բոլոր հոգեպահուստները, տղամարդիկ ժպտում էին հպարտ ու երջանիկ:

Ինչո՞ւ: Ո՞վ իմանա: Դե որ մարդ իմանա, ինքն էլ կաշխատի այդպես լինել, էլի:

Փխրուն սիրտ ուներ: Աչքերը լցվում էին միանգամից, երբ ազնիվ ու բարի մի բան էր լսում, երբ գեղեցիկ մի բան էր տեսնում: Չէր ամաչում, լաց էր լինում, հետո մեղավորի պես ծիծաղում էր իր լացի վրա եւ ձեռքերով էլ սրբում էր արցունքները:

Եւ անմիջապես էլ կրակ էր կտրում, երբ ակնատես էր լինում անարդարության, անազնվության, ստորության: Դառնում էր կոպիտ, դառնում էր վայրի ու հարձակվում էր անողոք, անզիջում, անսանձ: Ու չէր հանգստանում, մինչեւ որ հակառակորդը թիակների վրա չընկներ կամ չփախչե՞ր խուճապահար: Տանել չէր կարողանում անտարբերությունն ու հաշտվողականությունն ընդհանրապես եւ առանձնապես, երբ խոսքը վերաբերում էր գրականությանն ու լեզվին: Նրա համար սրբություն էր լեզուն եւ գրականությունը, զենք: Նա իր ընդդիմախոսին բաց չէր թողնի ժամեր շարունակ, կպահեր մինչեւ առավոտ, մինչեւ որ հասկացներ նրան սխալը: Նա նրան կոչնչացներ իր ապշեցուցիչ գիտելիքներով եւ անավոր

տրամաբանությամբ: Ոչ ոք թերեւս նրա նման չգիտեր համաշխարհային պոեզիան եւ նրա ժամանակակից ալեբախումները: Ոչ ոք նրա նման չէր կարող կռահել, թե գրականության մեջ ինչպիսի հոսանքներ են սկսվելու մի քանի տարի հետո: Ոչ ոք չի կարող պարծենալ, թե գրական ազնիվ վեճի մեջ կարողացել է հաղթել նրան:

Հիմա, երբ կարդում ես Պարույր Սեւակի ստեղծագործությունների հատորները, զարմանում ես, թե նա երբ է հասցրել այդքան գրել: Ախր նա ժամանակ չուներ: Ախր նա բոլորովին ժամանակ չուներ:

Երբ գրողների միություն էր գալիս աշխատանքի, նստում էր սեղանի մոտ թե չէ, գրպանից բարակ ու երկար մի թուղթ էր հանում, իր մանրիկ ու սիրուն ձեռագրով գրված: Ինչ-որ ցուցակ: Նայում էր շուրջը, ժպտում էր պայծառ ու ամաչկոտ իր ժպիտով ու ասում.

- Էսօրվա իմ անելիքը.

Ցուցակի առաջին կետում գրված էր լինում, որ պետհրատ պիտի զանգահարի իր գրքի համար: Իսկ երկրորդ կետում՝ որ չպիտի մոռանա ստանալ աշխատավարձը: Նա, սկսում էր երրորդ կետից: Չանգահարում-միջնորդում էր, որ ինստիտուտ ընդունեն գյուղից եկած մի շատ լավ տղայի, որ աշխատանքի ընդունեն մի խեղճ կնոջ, որ չձգձգեն մի վաստակած մարդու կենսաթոշակի հարցը, որ տպագրեն մի տաղանդավոր պատանու, որ այսինչ գյուղում անպայման գրադարան բացեն, որ չնեղեն փայլուն, բայց մի քիչ կամակոր մի ուսուցչի, որ քննեն մի բանվորի նորարարական առաջարկը, որ անպայման գրախոսական տպագրեն սփյուռքում լույս տեսած մի գրքի մասին, որ...

Ու հասցնում էր ամեն ինչ եւ միայն երկու բան էր մոռանում. որ պետհրատ զանգահարի իր գրքի համար եւ անպայման ստանա իր աշխատավարձը...

Եւ դրա համար էլ այդ երկու կետը միշտ, առանց փոփոխության նրա նոր ցուցակների սկզբում էին լինում:

Իր հիմնական աշխատանքից, իր ստեղծագործություններից դուրս այդքան զբաղված ու այդքան ծանրաբեռնված, նա բարեխիղճ էր բժախնդրության աստիճանի, ճշտապահ էր ու իր խոսքի տերը: Եւ ինչպես գրականության մեջ, կյանքում էլ առատաձեռն էր, շոտայլ ու հպարտ: Նրան, բնականաբար, շատերն էին ճանաչում ու սիրում, շատերն էին ուզում լինել նրա կողքին, շատերն էին ուզում հյուրասիրել նրան: Եւ նա չէր խուսափում մարդկանցից: Բայց հետո պարզվում էր, որ ինքն է վճարել բոլորի փոխարեն թաքուն: Մարդիկ նեղանում էին, բայց ինչպե՞ս նեղանաս Պարույրից, երբ նայում էր քեզ խորամանկ, քիչ ամաչկոտ ժպիտով, իսկ երբ շատ էին ճնշում, ծիծաղում ու ասում էր կատակով.

- Արա, դուք ո՞վ եք, է՛, որ ինձ հյուրասիրեք...

Չէ՛, անարդար բան է, որ նման մարդկանց մասին օրացույցում գրում են, թէ...

Նրանց ծննդյան թիվը միայն պետք է գրել:

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ